

## ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԳՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

(Աչ հեռու անցեալից)

Երբ առաջին անգամ «Ճայրագաւառ» ես գնում, սովորաբար ոչ ոք չի չնոհաւորում։ Չեզ ցանկանում են յաջողութիւն, բայց անպատճառ աւելացնում են, «բայց ափսոս, որ ծայրագաւառ էք գնում. աւելի լաւ կը լինէր, եթէ ձեզ կենդրոնական նահանգներից որ և է մէկում նշանակէին» . . . Երբ դուք առարկել էք սկսում, զես չգիտենալով թէ ինչ բան է «Ճայրագաւառը», ձեր խօսակիցը զիջողաբար ժպտում է և ըստ երևոյթին չցանկանալով ձեզ վիրաւորել աւելացնում է. «Դէ՞ն լաւ, դուք ինքներգ ամեն բան կիմանաք. ի հարկէ . . . մինոյն է . . . ամեն տեղ էլ մարդիկ են ապրում» . . .

Այդ ամբողջն ես ինձ վրայ զգացի, երբ 900-ական թուականներին ճանապարհունցի կովկաս այնտեղ ծառայելու համար։ Ես շատ ուրախ էի ինպերմանլանցի ճահճները հարաւի չնորհագեղ կլիմայով փոխարինելու, իսկ ծայրագաւառների մասին այն ժամանակ ես որոշ գաղափար չունէի: Բացի այդ, կովկասում ես ունէի ծանօթներ, նոյն իսկ գորոցի բնկերներ, թերեւ այդ էր պատճառը, որ ես ինձ անծանօթ աշխարհ էի գնում, ինչպէս ասում են, թեթև սրտով։

Ինձ նշանակել էին թիֆլիզում, ուր և ես եկայ յունուարին, թողնելով Պետերբուրգի սառնամանիքները և յայտնուելով յանկարծ արեւ տաք ու պայծառ ճառագայթների տակ—որտեղ Ռեօմիւրի ջերմաչափ ցերեկը 17 աստիճան տաքութիւն կայ։

Հէնց առաջին քայլից սկսուեց իմ զարմանքու Ռւմ հետ էլ որ խօսք էի բաց անում տեղական գործերի, տեղական կեանքի մասին, միշտ իրքի պատասխան լսում էի ծածկուած անբաւականութիւն, իսկ տեղացիներն ուղղակի զայրացած էին երկրում տիրող ուժիմի համար։

Չեն թողնում ապրենք, ամեն տեսակ հասարակական գործունէութիւնից հետացնում են մեզ—գանգատում էին իմ նոր հայութ վրացի ծանօթներաւ

—Ի՞նչպէս թէ չեն թողնում ապրէք—հետաքրքրում էի ես դործին աւելի մօտ ծանօթանալու համար։

—Նատ պարզ, երբ որ և է տեղ կամ պաշտօն է բացւում, անպատճառ աշխատում են, կաշուց դուրս են գալիս ուստի մացնել, իսկ վրացուն ու հային ամեննեին մօտ էլ չեն թողնում ելի դեռ հասկանալի կը լինէր, եթէ այստեղի բոլոր ուստա աստիճանաւորները

օրինակելի լինէին. Աստուած դիտէ թէ ինչ տեսակ մարդկանց են ուղարկում այստեղ . . . Լաւերից ոչ ոք ի հարկէ այստեղ զալ չի ցանկանայ, ասացէք խնդրեմ, այսպիսի հանգամանքների մէջ ում համար հաճելի է այս կողմերը գալ:

— Բայց ահա տեսնում էք, ես ինքս ցանկացել եմ գալ:

— Դուք հետու Պետերբուրգից էք գալիս, այնտեղ շատ բան չի համառմ, շատ բան տեսնում . . . Բայց մի փոքր մնացէք, ինքներդ կը տեսնէք . . .

Եւ յիրաւի, այն ժամանակ կովկասում «իշխանութիւնն» այնպիսի էր, որի մասին պատմել նշանակում է հեքաթներ ասել:

Ժամանակելի կովկասեան քաղաքացիական մասի կառավարիչը իշխան Գ. Ս. Գոլիցինն էր:

Ինձ միշտ տարօրինակ ու տրամարանօրէն միանգամայն անհասկանալի է թուացել, թէ ինչպէս կարելի էր մի ամրողջ ընդարձակ երկրի կառավարութիւնը, որպիսին կովկասն է, յանձնել մի այդպիսի զարմանալի՝ իրան նմանը չունեցող սամոզուրի, որպիսին իշխան Գոլիցինն էր: Ես սամոզուր եմ անուանում նրան միմիայն նրա համար, որովհետև չեմ դանում աւելի յարմար բառ բնորոշելու այդ կիսաճիւտանդ մարդուն, որ բոլորովին անհետողական է իր բոլոր գործերի մէջ, որ նայում է յւր կառավարած երկրի վրայ, կարծես սա թշնամու բանակ լինի, իսկ տեղացիների վրայ—որպէս զիմակաւորուած թշնամիների վրայ, որ միշտ և ամենուրէք գաւազրութիւն և ապստամբութիւն է որոնում, որ զրգուող է և դիւրաբորովք մինչև զիտակցութիւնը կրոցնելու աստիճան:

Բնական է, որ այդպիսի մարդը երկրում չէր կարող համակրանք վայելել: Ռուս աստիճանաւորները վախենում էին նրանից, կարծես նա կրակ լինէր. որովհետև նրա համար շատ հեշտ էր փչացնել ամրողջ կարգերը որ և է աստիճանաւորի միմիայն նրա համար, որ դուք նրան դուր չեք գալիս, տեղացիները, որոնք աւելի կրակուած էին և տապաւորուն, դժուարութեամբ էին ծածկում իրանց զայրոյթը: Իշխան Գոլիցինի զիւրաբորոգութեան մասին թիֆլիզում ամրողջ լնգենդաներ էին պատմում: Դուքս է գալիս, որ այդ անեկդոտները ոչ թէ հնարուիլ են, այլ իսկական փաստեր—շատ անդամ եղակ ի իրանց տեսակի մէջ:

Ահա ձեզ, օրինակ, մի միջնադէպ իշխան Գոլիցինի հետ կատարուած, որի մասին ես իմացայ անմիջապէս, երբ թիֆլիզ եկայ և որի մասին այն ժամանակ շատ էին խօսում զինորական շրջաններում:

Գոլիցինը բացի «քաղաքացիական մասից» կառավարում էր նաև կովկասի բոլոր զինորական գործերը որպէս լիակատար հրամանատար կովկասի զինորական շրջանի զօրքերի:

Նրա կարծիքով մի անգամ հարկաւոր է լինում մի գենեռալի մի «լաւ խրատել» նրա համար, որ սա վատ էր կատարել իրան յանձնուած դործը—կախեթիայի զինուորական մասի ռեզիզիան։ Գենեռալը—թող նրա անունը մեղոսով լինի, պալատ է կանչում նորին պայծառափայլութեան մօտ այս ինչ օրը առաւօտեան ժամի 11-ին։

Հենց նոյն չարաբաստիկ առաւօտը պալատ է գալիս ժամը 11-ին և մի այլ զենեռալ, թող նրա անունն էլ Ֆեդորով լինի, սա կալիս է իշխանին չորհակալութիւն յայտնելու վաղուց փափագած օոդենն ստացած լինելուն համար։

Երկու գենեռալները նախառենակում իրար պատահում են, մեղիդ ժամը 11-ին նրանցից մէկին հրաւիրում են իշխանի մօտ, բայց հերթապահ աստիճանաւորի սիամլամբ առաջինը ներս է թողնում ոչ թէ «խրատուելու» հրաւիրուած մեղոսովը, այլ չորհակալութիւն յայտնելու եկած Ֆեդորովը։

Իշխանն առանձնապէս տրամադրութիւն չունէր այդ առաւօտը Ոչինչ բարի բան գուշակել չէին տալիս նրա կարմիր ուռած երեսը, նրա անաղին, բարձր ու իւղակալած մարմինը՝ դուրս ընկած փորով ու նրա կարծ վիզը։ Մոայլ նստել էր գրասեղանի առաջ և փոստն էր նայում։

—Գենեռալ մայնոր մեղորով—գեկուցեց հերթապահը։

Իշխանին թւաց, զուցէ ազդանունների նմանութիւնից—որ գեկուցումը զենեռալ մասինէ։

—Երկը, բերէք զրան այստեղ—զայրովթով լցուած դուռ սկսեց երկու կաավարիչը շտապելով որքան կարելի է շուտ և քրա պրծներ ելողին։

Աւրախ ուրախ համարեա ներս թռաւ գենեռալ Ֆեդորովը և բարձրաձայն արտասանել սկսեց վաղուց պատրաստուած ճառը։

—Արտայայտել չեմ կարող, թէ ինչպէս շոյուած եմ Զերդ պայծառափայլութեան դէպի ինձ ցոյդ տուած չորհի համար, պարտականութիւնս եմ համարում չորհակալութիւնս յայնտել . . .

Իշխանը, Անթագրելով, որ իր առաջ կանգնած է մեղաւոր մեղոսովը, որին նա անձամբ լաւ չէր ճանաչում, որովհետեւ ամենեին դործ չէր ունեցել հետք և իւր կեանքի ընթացքում մէկ թէ երկու անգամ էր տեսել—զայրովթից բոլորովին կարմրած տեղից վեր թռնելով վրայ պրծաւ ներս մանով զենեռալին թոյլ շտալով որ սա իր խօսքը վերջացնի։

—Ռչ, թոյլ տուէք խնդրեմ, ես պէտք է ձեզ չորհակալութիւն յայտնեմ, ձերդ զերազանցութիւն, ձեր անմիտ ու ոչինչ զեկուցումի համար։ Ասելիք չունեմ, լաւ էք բարեկամացել . . . գոռում էք իշխանը։

Ֆեդորովը շշմնել էր և ինարկէ բոլորովին չէր հասկանում թէ

ինչի մասին է խօսում երկրի կառավարիչը և թէ ինչ է խոր մեղքը:

— Բայց ձերդ պայծառափայլութիւն, ինչ զեկուցումի մասին էք բարեհաճում խօսել—թոթովեց ինքն իրան կորցրած զենեռալը:

— Եւ դեռ համարձակութիւն կայ հարցնելու ինչ զեկուցումի մասին, առաջուայ նման գոռում էք իշխանը, աւելի ու աւելի կարմրելով և բորբոքուելով: Զեր զեկուցումի մասին, պարոն, Կախիթիա գնալու մասին, մի զեկուցում, որի մէջ լոկ խօսքեր են և ոչ մի գործ . . .

Եւ բանելով սեղանի վրայից մի թուղթ (կարծեմ ոչ այն թուղթը, որ նա ուզում էք) Գոլիցինը մօտեցրեց արդէն բոլորովին շուարած զենեռալ ֆեդորովի քթին:

— Ահա, ահա ձեր զեկուցումը, միթէ այլպէս են կատարում իշխանութեան յանձնարարութիւնը: Դուք չէք պատասխանել ոչ մի հարցի, որ ձեզ պատուիրուած էք պատասխանել առաջին բանակի հրամանատարի կողմից . . .

— Բայց ձերդ պայծառափայլութիւն, ես Կախիթիա չեմ գնացել, զենեռալ Ամիրաջիրիից ոչ մի հրաման չեմ ստացել. Դուք ինձ բարեհաճում էք մի ուրիշի տեղը ընդունել—առարկեց ֆեդորովը—հասկանալով բանն ինչումն է:

Բայց կատաղած իշխանն այլ ես չեր լսում նրա առարկութիւնները: Նա շարունակ մօտենում էք սեղմած բառնցքներով զըժքախտ զենեռալի վրայ, և ոտքերը դրոփելով զոռում էք ահռելի ձայնով:

— Լաւ ճահատարհորդութիւն էք արել Կախիթում, այնտեղի գինին լաւ վայելել էք կալուածատերների հետ, սաել էք Ցինանդալի, ի հարկէ Զաւշաւածէ իշխանների մօտ իսկ ձեր ոնվիզեան—ոչինչ, մի կողմ էք թողել:

— Դուք բարեհաճում էք ինձ ուրիշի տէզը զնել, ես . . .

— Իսկ զործը տուժում է, սելիզեան կատարուած չէ.

— Բայց ինդրեմ . . . ես . . .

— Ոչինչ կատարուած չէ, ինչ, երեի հրամայում էք ձեր վոխարէն ուրիշին ուզարկել. ամաչեցէք:

— Դուք սիսալում էք. պնդում էք ինզ զենեռալը, հնարաւորութիւն չունենալով իւր վրայ տեղացող խօսքերի միջից ասել. թէ ով է ի՞վր:

— Բարեհաճեցէք հրաժարական տալ. զոռաց իշխանը. ձեզ պէս ծոյլերը հարկաւոր չեն ինձ. հրաժարական, հրաժարական:

Բայց արդէն նրա բերանը թքակալեց և մի առ բոլէ լոեց իշխանը:

Հրաժարական խօսքը մողական ուժով ազգեց շարաբաստիկ զենեռալի վրայ:

Հաւաքիլով իւր թռքերի բոլոր ուժը, զերջապէս բղաւեց նա ուղիղ Գոյիցինի ականջների տակ.

Ես ոչ մի յանձնաբարութիւն չեմ կատարել կախեթիայում. ես գենեռալ մայեոր Ֆեդորովն եմ և եկել եմ չորհակալութիւն յայտնելու ինձ չորհուած օրդենի համար.—Եւ նա ցոյց տուեց Ստանիսլաւի աստղիլը, որ զարդարում էր նրա տօնական համազդեստը:

Երեակայեցէք պատկերը!

—Ի՞նչպէս, Դուք ուրեմն գենեռալ Ֆեդորովը չէք.

—Ոչ երբէք, ձերդ պայծառափայլութիւն. ես գենեռալ մայեոր Ֆեդորովն եմ:

Այժմ ինչն իրան կորցնելու հերթը իշխանին հասու:

—Ի սէր Աստուծոյ, ներեցէք—սկսեց իշխանը ներողութիւն խնդրել վիրաւորուած ստորադրեալից;—Ես ձեզ մեղսուավի աեզ եմ քնդունել Ներթապահն է այս բոլորի պատճառը: Ա՛խ, ինչպէս զայրացուցիչ է!—Շատ ոչառ ուրախ եմ, որ Դուք արժանի կերպով էք պարզեաարուել... Բայց ուր է հապա մեղսուավը. և նա զանգահարեց:

Երկչուա ներս մտաւ հերթապահը:

—Եկել է գենեռալ Ֆեդորովը.

—Վաղոց է նախասենեակում սպասում է.

—Ինչու անմիջապէս չէք ներս թօզել ինձ մօտ. Դուք միշտ խառնում էք, էլ հերթապահութիւն չէք անի... Բայց Դուք ինձ ներեցէք, խնդրեմ, նորից զարձաւ իշխանը պարզեաարուած գենեռավին... պարզապէս սխալ էր իմ կողմից...

Եւ նա մինչե նախասենեակը ինքը ձահապահն զբեց ի զուր տեղը այդքան յանդիմանուած ու հայնոյուած գենեռալին:

Ապա ներս հրաւիրուեց գենեռալ Ֆեդորովը, որ սարսափած լսել էր կարինեատից նրա ուկանջին հասնող գոռոցի հեռաւոր հնչիւնները: Թէ յետոյ ինչ է լինում—այդ մասին պատմութիւնը լսում է հեռատեսաաբար:

Ես զիտմամբ բերի այս տեսարանը, որպէս զի ընթերցողներին լիսկատար հնարաւորութիւն տամ դատելու, թէ ում ձեռին էր այդ ժամանակները կովկասի կառավարութիւնը և թէ երկրի ընակչութիւնը կարող էր արդեօք փոքր իշատէ յարգանք և բարեկամութիւն տածել դէպի այդ ընդարձակ ծայրագաւառի իշխանութիւնը, որը շատ յաճախ իւր պալատում նմանօրինակ ֆարսեր էր սարքում կառավարութեան բոլոր մասերում տիրում էր նոյնպիսի խառնաշփոթութիւն և անհետեղականութիւն. երկրի կառավարչական բարձր շրջանների վերաբերմունքը դէպի կեանքը, մամուլը—ամենազայրացուցիչ աւտիճանին էր հասել:

Ես Թիֆլիզ եկայ վ. և Վելիչկոյն «խորտակումից» անմիջապէս յետոյց Վելիչկոն Կովկասում կատարեալ որս էր բաց արել հայերի և վրացիների վրայ և բոլորովին անպատճետ անուանարկում և զրադարտում էր ամբողջ երեք տարի շարունակ Կովկասի պաշտօնական հրատարակութեան մէջ:

Բայց այս «ոռուսական» քաղաքականութիւնն այնքան էլ դուք չի գալիս Պետերուրգում և ահա իշխան Գոլիցինը՝ արհելեան բըռնակալի թեթև սրտով մի անգամից Վելիչկոյից երես է շուռ աալիս և բոլորի համար բոլորովին անսպասելի կերպով առնում է նրանից «կաւկազ»ի խմբագրութիւնը:

«Պատրիոտ»-ի շահաւէտ դիմակի տակ թագնուած իւր համար կարյերա ստեղծելու յետելից ընկած—Վելիչկոն, որպէս «իսկական ոռու» ուղղակի ամեն տնջ գաւաղրութիւն և ապստամբութիւն էր փնտրում և այդպիսի «զիւտերով» սարսափեցնում էր անհաստատ և երկրի կառավարութեան համար բոլորովին անպատճառ իշխան Գոլիցինին:

Վելիչկոն ասում էր, օրինակ, որ Թիֆլիզի արտիստական ընկերութեան մէջ, որ խաղաղ զրադում էր երաժշտութեամբ և ընտանեկան թատրոնով, երեկոները՝ փորձերի ժամանակ ինչ որ բան են մտածում, մի ինչ որ բանի պատճառատում են և որ տեղական բոլոր՝ թերթերի խմբագրութիւնների մէջ (բացի, ի հարկէ, իւր խմբագրած պաշտօնական «կաւկազ»-ից) ամենակատաղի յեղափոխականներ են նստած, Նոյն երգն էր երգում, պէտք է տաել, նաև տեղական ժանդարմիտական վարչութիւնը, որ իւր պաշտօնն ու պարտականութիւնն էր համարում զանազան վանագան վանդաններ գտնել այնտեղ, որտեղ չկան և չեն եղել . . . Նա լուրջ կերպով տեղեկացնում էր Պետերուրգ և իշխան Գոլիցինին, որ Թիֆլիզի հայոց բարեգործական ընկերութեան մէջ մարդիկ զրադուած են ոչ թէ ազբատներին օգնելով, այլ Կովկասը Ռուսաստանից բաժանելու պատրաստութեամբ և բացարձակ կերպով Ռեմբինդառնի վրայ տպում են . . . յեղափոխական կոչեր:

Կարող էք երեակայիլ թէ այն ժամանակ Կովկասեան մամուլը ինչպիսի ճնշման տակ էր գտնւում: Ես շատ մօտ ծանօթ էի տեղական բոլոր զրաքննական գործերին, որովհետեւ հին ընկեր էի ցենտրուրների հետ, որոնցից երեքը գեռ Լազարեան ճեմարանից իմ մօտ ընկերներն էին: Նշանակուած լինելով հոգ տանելու տեղական հրատարակութիւնների վեասակար գործունէութեամբ, բայց այդ օրդանների մէջ բացարձակօրէն չգտնելով ոչ մի «հակակառավարչական» բան, որ նոյն իսկ արժանի լինէր խուզարեկութիւնների, որոնք ժամանակ առ ժամանակ և բոլորովին յանկարձակի տեղի էին ունենում Թիֆլիզի թերթերի խմբագրատների մէջ, զրաքննիչները

հանգամանքների բերմամբ տեղական թերթերի թշնամիներից դարձել էին զրանց պաշտպաններն ու ազատարարները և ամեն կերպ աշխատում էին տեղական մամուլի զրութիւնը մի փոքր գոնչ տանիլի դարձնել։ Այդ տեսակետից կովկասի գրաքննական կոմիտեաը զլուխ ունենալով իւր նախազահին—բազմակողմանի կրթուած ու մարդասէր Մ. Պ. Գակկելին—կովկասի կեանքը մէջ այն ժամանակ շատ նշանաւոր, հետաքրքիր և անսովոր դեր էր խաղում, լինելով հակառակ բոլոր միւս ցենզուրական կոմիտեաների, ոչ թէ տեղական մամուլի համար մի սարսափելի հաստատութիւն, այլ նրա տիրութիւնների և գոււարութիւնների մէջ ապաստանարան և բարի խորհրդատու։

Թիֆլիսի «Խօօօ Օբօզրէնի» թերթի մէջ, որ հրատարակւում էր Թումանովի իշխանների կողմից և կովկասեան ցրջաններում համարւում էր առանձնապէս լիբերալ և «վտանգաւոր» հաւանօրէն միմիայն նրա համար, որ շատ յիմարութիւններ չէր ասում—իմ թիֆլիս գալուց ոչ շատ առաջ մի ֆելեառն է լոյս տեսնում «իվանովիչ» ստորագրութեամբ։ Այդ կեղծ անունը պատկանում էր ոմն Ն. Ի. Սվեդենցովին, անզեղջ վաթսուն տարեկան մի մարդու, որ իւր ժամանակ մի ինչ որ բան էր կատարել, որի համար էլ վարչական պատժի էր երթարկուել, իսկ յետոյ կովկաս էր եկել։ Այդ պարսնը տեղական իշխանութեան աչքի տակն էր և նրա բոլոր զրուածքները անդական օրդանների մէջ՝ ծուռ ու շիտակ բաշտարւում էին և զանազան կասկածների տեղիք տալիս։ Այդ ֆելետոնը լոյս էր տեսել սեպտեմբերին—ճէնց անմիջապէս, երբ տեղական ծառայողներն ու աստիճանաւորները վերադարձել էին իրանց քիչ շատ երկարատև արձակուրդներից, այդտեղ նկարագրուած էր կովկասի բախտը տնօրինողների բարեհողի վիճակը ամառային արձակուրդներից յետոյ։ Այդ թեման այնքան անսնեղ էր և սովորական նոյն իսկ զրաքննական ցրջանում, այնքան յաճախ կրկնուում էր և զրւում, որ առաջին ժամանակները նոյն իսկ ոչ ոք ուշացրութիւն չդարձրից և նա այդպէս էլ անուշադիր կանցնէր, եթէ որ «իսկական սուս» Վելիչկոն չինէր, որը որովհետեւ գրաքննական կոմիտեան կողմից իւր զրպարտութիւնների մէջ արգելքի էր հանդիպում, իշխան Գոլիցինին գանգատ է տալիս ցենզուրական կոմիտեաի վրայ։ Նա հաւատացնում էր, որ կոմիտեաը թոյլ չի տալիս «կաւկազի» համար զրուած ամենաանմեղ յօդուածները, մինչդեռ թոյլ է տալիս իվանովիչի ֆելետոնները «Խօօօ Օբօզրէնի»-ի մէջ, որտեղ տեղական բարձր իշխանութիւնը չար կերպով ծաղրւում է։ «Եսկական սուս» աչքաթող չի անում իշխան Գոլիցինին բացատրելու, որ «ամսի քսան»-ի մարդկանց շարքում, որոնք ամառային արձակուրդների ժամանակ հիանալի կեանք են անցկացնում քայլեցնելում, պէտք է

յանդուզն ակնարկ նկատել հէնց իշխան Գոլիցինի իրա համար, որը իւր սոճիկը նոյնպէս ամսի քսանին է սոտանում և երկու ամառային ամիս է անցկացրել իսսենտուկում, որտեղ նա բժշկում էր չափազանց չաղութիւնից և ընդհանուր իւղակալութիւնից; Իշխան Գոլիցինը, ի հարկէ առանց բանի էութիւնն հասկանալու լցւում է զայրոյթով, և Ներքին Գործերի մինիստրից պահանջում է պաշտօնից արձակել զրաքննիչը իւր. ի. Նոփալին, որ մեղքն այն է եղել, որ իսկութեամբ կատարել է զրաքննական կանոնադրութիւնը, որը պահանջում էր զրաքննիչից առարկայօրէն վերաբերում դէպի տեքստի պարզ իմաստը, զլուշանալ անձնական կամայական բացատրութիւններից:

Այլ ևս չօգնեցին ցենզուրական կոմիտեաի ոչ մի միջամտութիւնը և զրաքննիչը պէտք է թողնէր Կովկասը ամենազօր սատրապի և նրա օգնական Վելիչկոյի քմահաճոյքի համաձայն:

Երբ ծառայութիւնից հետացուած զրաքննիչը իւր. Նոփալը Պետերբուրգում մամուլի գլխաւոր վարչութեան կառավարիչ Մ. Պ. Սոլովեյովին ներկայացաւ և զործը իր բոլոր մանրամասնութեամբ պատմաց ինչպէս որ կար, առ դարմանքից ձեռքերն այն ու այն կողմը շարժեց և «հրեսից ընկած» ցենզորին խեղ նշանակեց Պետերբուրգի ցենզորական կոմիտեաի մէջ — յատկացնելով նրան մամուլի վարչութեան ընդհանուր զումարներից համապատասխան վարձատրութիւն. Դեռ լաւ է, որ այս «զատամութիւնը» համեմատաբար լաւ վերջացաւ Հակառակ դէպքում բոլորովին անմեղ մարդը ամենազօր պսիխոպատի քմահաճոյքը պէտք է զրկուէր իւր մի կտոր հացից ու իւր երկու փոքրիկ երեխաների հետ փողոցում մնար . . .

Նրա տեղը Թիֆլիզ ուղարկեցին մի ուրիշ զրաքննիչի — մամուլի զործերի առանձին յանձնարարութիւնների աստիճանաւորներից մէկին. բայց սա էլ իշխան Գոլիցինի ճաշակին չեկաւ, որովհետեւ իւր պարտականութիւնների կատարման մէջ հետեւում էր ամենայն խստութեամբ զրաքննաւորան կանոնադրութեանը և մամուլի վարչութեան շրջարկականներին և չէր ենթարկեւում երկրի կառավարչի կառավարչի կանցելեարքաների զանազան հոսանքներին. Շուտով նրա զրութիւնը խիստ զժուարին է զառնուում. պալատում նրան սկսում են մեղազրել համարեա, տեղական մամուլի սիստեմատիկ փչացման մէջ, և նա խնդրում է իրան փոխին, որն և բարերախտարար յաջողուում է: Բայց և այնպէս երկրի կառավարիչը աշխատում էր նրան ամեն կերպ սեացնել և վատարանել այն ժամանակուայ Ներքին Գործերի մինիստր վ. կ. Պլեվէի մօտ: Սա իւր բոլոր վատարանութիւնների հետ միասին հիանալի սրտազէտ էր և մարդկանց գնահատել գիտէր ըստ արժանուոյն: Կովկասի պսիխոպատ կառավարչի նկատմամբ նա առանց քաշուելու ասում էր, «ե այսպիսի

մարդու է յանձնուած ամբողջ երկրի կառավարութիւնը:

Եթէ նկարագրուած շրջանում ոռւսաց մամուլը կովկասում հալածանքի մէջ էր, ապա տեղական—վրացիական և հայկական մամուլը լիակատար ճնշման էպոխան էր ապրում: Ծուսական թերթերը դիտողութեան աւելի յարմար են, քան տեղական լեզուներով հրատարակող թերթերը. և այստեղ միշտ աւելի հեշտ է կասկածել զրաքննիչներին, որոնք նշանակում էին տեղացիներից. յանցաւոր կողմանապահութեան մէջ: Թէ տեղական զրաքննիչներից (երկու հայ, մէկ վրացի) գուրս էին ամեն տեսակ կասկածներից և բոլորովին բարեխիղճ ու խելացի կատարում էին իրանց պարտականութիւնները, բայց և այնպէս նրանք կառավարչապետի կանցելիքարիայի և ժանդարմիական վարչութեան մշտական հսկողութեան տակ էին... Այս վերջինը, ցանկանալով ամեն կերպ աչքի ընկնել և կովկասի ազատիչը դառնալ, չարունակ զանազան երկիւղներ էր հնարում, զիտակցարար վախեցնելով տեղական իշխանութիւնը երկրում իրք թէ ծածուկ երեացող շարժման երեակայական անսիլներով և ցենզուրական կոմիտետի նախագահը շատ յաճախ իշխան Գոլիցինի շաբաթական ընդհանուր ընդունելութեան ժամանակ ենթարկում էր նրա հետաքրքիր հարցերին. ճիշտ է, որ հայերէն այս ինչ թերթի մէջ մօտ օրերս տպուած է եղել այս ինչ յօդուածը—որը պէտք էր թոյլ չտալ, իսկ վրացիական լրազրի մէջ լոյս է տեսել ահա թէ ինչպէսի մի լուր—չափազանց սենսացիոնել... Կոմիտետի նախագահը, որն ի հարկէ չէր կարող բոլորը լիշել, ինչ որ լոյս էր տեսնում շաբաթուայ ընթացքում ամբողջ կովկասեան մամուլի մէջ—իշխանին խոստանում էր անմիջապէս ստուգել. և վերադանում էր դժգոհ ու անբաւական ու տեղացի զրաքննիչների հետ աշխատում էր իմանալ—թէ ինչն էր իշխանի բարկութեան պատճառը: Սովորաբար ամեն բան ոչինչ բանով էր վերջանում. կամ Գոլոցինի ակնարկած յօդուածները ամեննեին լոյս չէին տեսած լինում, կամ նրանք զուտ քերականական տեսակէտից սխալ էին հասկացուել ու այլպէս էլ սխալ թարգմանուել կամ թէ չէ նրանց միտքը դիտաւորեալ կերպով խեղաթիւրուած էր լինում:

Էջմիածնի վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները առանձին հոգատարութեամբ էին նայում: Ամեն բան, ինչ որ կատաւում էր այս պատմական վանքում, որտեղ նստում էր ամենայն Հայոց եաւթողիկոսը (այն ժամանակ կաթողիկոս էր հոչակաւոր Մկրտիչ Ա. ք. հայկական շրջաններում անսովոր ժողովրդականութեան տէր և «Հայրիկ» մականունին արժանացած) կասկածելի էր երեսում և Հայոց կաթողիկոսի իւրաքանչիւր ճանապարհորդութիւնը հայկական եկեղեցական գործերով—պատճառ էր գառնում աղմուկի ու ծածուկ զրազրութեան էջմիածնի պրոկուրորի կողմից, որն այն ժամանակ

պաշտօն ունէր սինոդում և հսկում էր նրա զբաղմունքների օրի-  
նաւորութեան և կանոնաւորութեան վրայ:

Ահա թէ ինչու համար Հայոց կղերական «Նոր-Գար» թերթը,  
որ այժմ գոյութիւն չունի, մեծամեծ խոտութիւնների էր ենթար-  
կում այնպիսի բաների համար, որ զբագնական նորմալ պայմանների  
մէջ ոչ մի նշանակութիւն չէր կարող ունենալ: «Մշակ» լրագրի մէջ  
զբագնիչին անհանգստացնում էին սովորակար ֆելետոնները, որ-  
տեղ զբում էին զանազան լեզենդաններ, պատմուածքներ, առակներ  
Ամեն ահսակ այլարանութեան տակ ի հարկէ ինչ ուզենաք կարող  
էր հասկանալ. ուսափի և այդ ֆելետոնները կոմիտենի նիստերում  
մեծ վիճարանութիւններ էին առաջ բերում. թէև ինչպէս վերեւում  
ակնարկուեց, դենգուրական կանոնադրութիւնը պատուիրում է  
զբագնիչներին ուշագրութիւն դարձնել միմիայն խօսքե պարզ ի-  
մասափի վրայ—թոյլ շտալով սովորմէջ որ և է բան կարդալու Բայց  
Գոլիցինի ուժիմն էր այդ—և ակամայից ննթարկեում էր զբան նաև  
զբագնութիւնը: Նոյն իսկ ընտանեկան «Ազրիւր» հրատարակու-  
թիւնը, որի մէջ քիչ էր մնում տպագրուէին խոհանոցի և ընդհան-  
րապէս տնտեսութեան վիրաբերեալ յօդուածներ—նոյն իսկ այդպիսի  
ժուռնալը զբագնիչին կասկածի տեղիք էր առլիս. բանում էին  
ամենաանմեղ յօդուածներ, որ և ժուռնալի հիւանդ հրատարակչին  
յուսահատեցնում էր:

Նոյնը կառարւում էր նաև վրաց մամուլի մէջ և նոյն իսկ մի  
փոքր աւելի մեծ չափով, որովհետեւ վրաց հրատարակութիւնների  
մէջ այն ժամանակ մասնակցում էր Թիֆլիզեցի սոցիալ-դեմոկրատ  
իմերեթին ն. Զորդանիան, որ հասարակական զանազան խնդիրների  
մասին տաք ու տաղանդաւոր յօդուածներ էր գրում, յօդուածներ,  
որոնք ամեն օր տպւում էին մայրաքաղաքի թերթերի մէջ, որոնք  
սակայն սարսափեցնում էին Կովկասի իշխանաւորներին: Գրագնիչը  
միշտ երկու կրակի մէջ էր, մի կողմից Զորդանիայի վրայ նայում  
էին համարեա որպէս յեղափոխականի վրայ և զբագնիչը պէսք է  
նրան «բռնէր» թերթերի սիւնեակներում, միւս կողմից նա որպէս  
կարգին մարդ իրան իրաւոնք չէր համարում այդ «յեղափոխական»-ի  
իւրաքանչիւր գրագը քաշքան. չէ որ այդ մարդը գրում բոլորովին  
գիտական, վերացական յօդուածներ սոցիոլոգիայի մասին, որոնք  
ոչնչով նման չէին այն կոչներին, որ ժանդարմերիան ամեն տեղ  
փնտրում էր: Բայց և այնպէս նրան յաջողւում է բռնել ն. Զոր-  
դանիային և Մետեխում քաղաքական բանտարկեալների բաժնում  
առանձին բանտարկել: Ես Թիֆլիզի բանտային դիրեկտոր էի և  
բանտն այցելած ժամանակս խնդրեցի, որ ինձ թոյլ տան տեսնուել  
այդ բանտարկեալի հետ. բայց չնայած իմ պաշտօնական դիրքիս,  
իմ խնդիրս մերժեցին, որովհետեւ նրան համարում էին «վերին աս-

տիմանի լուրջ» բանտարկեալ Այդ լրջութիւնը նրանք հիմնում էին նրան բանտարկելու ժամանակ կատարած խուզարկութեան հետեանքի վրայ՝ զրաւած զրադարձնը, որ բազկանում էր բացառապէս եւրոպական լեզուներից զրբերով, որոնք և ժանդարմերիայի կողմից ցենզուրական կոմիտետ է ուղարկւում նրանց բովանդակութիւնը պլարզելու համար կոմիտետը նայում է այդ զրբերը: Դրանք բոլորը սոցիոգիայի հին և նոր կլասսիկ զրբեր էին—ինպես, Կարլ Մարքսի, Լաֆարզի, Ազամ Ամիտի Զորջի... աշխատութիւնները, կոմիտեարյայնում է որ այդ զրբերը չեն ենթարկում արգելքի և կարող են հասարակութեան մէջ շրջանառութեան առարկայ լինել Պետերբուրզի օտարերկրեան զրբերի կենցրոնական կոմիտետի կանոնների համաձայն: Դրանից յետոյ ի հարկէ ժանդարմերիան չէր կարող այլ ևս երկար պահել Զորդանիային և ատամները կրծատացնելով ազատում է նրան վերադարձնելով նրան նաև զրադարձնը:

Սակայն գԺբախտաբար կովկասի ցենզուրական կոմիտեարմիշտ էլ այդպիսի անկախութիւն հանդէս չէր բերում: Նա յաճախ աններելի թուլութիւն էր ցոյց տալիս կովկասում տիրող անհնարինումիմի հետ իւր ունեցած կռւում: Այդ աչքի էր ընկնում յատկապէս իւր վերաբերմունքի մէջ որ նա ունէր կռմս և և. Տոլստոյի զրուածքների նկատմամբ: Ինչպէս յայտնի է: Տոլստոյը 1901 թուի սկզբում այնքան լուրջ հիւանդ էր, որ օրէցօր նրա մահուան էին սպասում: Երկիւզ կար ի հարկէ, որ հոգեհանգստի ժամանակ յուղումներ կարող էին ծագել: Ուստի ներքին Գործերի մինիստր Դ. Ա. Սիպեագինից առանձին հրաման է զալիս ամենամեծ խստութեամբ վերաբերուել ամեն բանի, ինչ որ զրւում է Տոլստոյի և նրա հիւանդութեան մստին: Հենց ճիշտ այդ ժամանակ էր, որ տեղական Տոլստոյականներից մէկը—իշխան Գ. Նակաշիձէն, որ անձամբ լաւ զիտէր Տոլստոյին և նրա ամրողջ ընտանիքը և նրա զերմ երկրպագուն էր—զրաքննական կոմիտետին ներկայացնում է մի զրբոյկ, որի մէջ նկարագրուած էր այն ամենը ինչ որ այդ օրերը եամուայտ-Պոլեանայում կատարւում էր, այն ամենահետաքրքիր նամակների և հետազիրների հիման վրայ, որ նա շարունակ այնտեղից ստանում էր իշխանունի Օրովենսկուց, կոմսունի Ալէքսանդրա Լվովիչայից և Վ. Զերտկովից: Այդ նամակների մէջ բերւում էին Տոլստոյի շատ խօսքերը, դարձուածքներն ու ամրողջ խօսակցութիւններ, որ նա ունենում էր իրան շրջապատող մարդկանց հետ, այդ բոլորից երեսում էր, ինչպէս մեծ մտածողը հին խմաստունների նման փիլիսոփայական հանդասութեամբ էր նայում մահուան սոսկալի տեսիլքին և թէ նա ինչպէս խօստանում էր իւր մտերիմներին հազորզել, եթէ կարող է, այն ամենը, ինչ որ նա զգալու էր միւս աշխարհն անցնելու վայրկեանին: Ինչպէս որ նա մի անգամ սասափի թուլութեան

բոպէին ասել է. «Կարծես իս արդէն սկսեցի ձեզանից հետու հետու գնալ, բայց յանկարծ մի ինչ որ բան ինձ գարձեալ յետ բերեց...» Խուս գրաքննիչը ի հարկէ թոյլ տուեց ամբողջ ինտելիգենտ աշխարհի համար հետաքրքիր այդ գրքոյկը և յիշուած շրջաբերականի պատճառով պարտք համարեց կոմիտետին իմաց տալ այդ մասին. որն և հաւանութիւն առ եց նրա արածին։

Չեռագիրը՝ գրաքննիչը թոյլադրով մակաղըութիւնը վրան տրւում է իշխան Նահազիձէին, սա էլ տպարան է յանձնում տպելու. յանկարծ տեղի է ունենում գեկորացիաների անսպասելի փոփոխութիւնն կոմիտետի նախագահը — հաւահօրէն կառավարչապետի կանցելիարիայի ճնշմամբ, չնայած որ նոր էր կոմիտետը վճիռ կայցրել որոշիւրի տպադրութեան համար — իշխան Նահազիձէին իր մօտ է կանչում և համոզում է նրան ձեռագիրը տպարանից յետ վերցնել, որ նա արդէն շարւում էր և վերադարձնել կոմիտետին, որովհետեւ իրը թէ այդ պատճառով կարող էր շատ մեծ անսախորժութիւն ծագել, թէ կոմիտետի, թէ նախագահի, թէ գրաքննիչի և թէ իրա՛ իշխան Նահազիձէի համար Նահազիձէն իր ջանելութեան պատճառով կատարում է ինչ որ նրան առաջարկում են և բրոշիւրը վերադառնում է ցենզուրային կոմիտետի ուժնաեղբանելում։

Ահա թէ ինչ էր կատարում կոմիտետը իշխան Գոլիցինի կառավարութեան ժամանակ, որ սիստեմատիկ զրգանլով, ընակչութեանը վիրաւորելով — և հետզետէ պատրաստելով, վերջապէս երկիրը յեղափոխութեան հասցրեց Յեղափոխութեան ուժն ու թափը կովկասում անկասկած զգալի կերպով թոյլ կարտայացտուէր, եթէ որ այս կարեոր ծայրագաւառում ամեն ժամ չկատարուէին ազօրինութիւններ, և օրինագանցութիւններ, որոնց միայն լոկ մի ժամնիկը այստեղ նկարագրուեց։

Իսորիտ. Բ. 1912. № 6.

Ա. Ա. Ա.